# ԱԶԳԱՍԷՐ

Հրատարակի հնգետասա-նօրեայ. ցձեռւքն միշտ. տարեկան կ. ռուփի 24 · Բաժանորդաց ընկերս 500·

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՌՆԷ ԶԱՄԵՆ ԵՐԿՆԻՑ

Ընծայն ազգային հրա-տարակութիւնք ձրի տը-պին ·
Ուսանելին զգոյ ազգա-սէրք զայս սա տային·

ԼՐԱԳԻՐ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՓԻՏՈՒԹԵԱՆ

ՀԱՏ. Ե. Թիւ 134 ԿԱԼԿԱԹԱ 1848 Մայիս 18


## ՔԱՂԱՔԱԿԱՆՔ

### ԿԱԼԿԱԹԱ

ԳԵՐԱՊԱՏԻՒ Հայր Գաբրիէլ Այ-վազեան Ակադեմական Ուխտի սրբոյն Ղազարու ՚ի Վենետիկ համագրա-կար, մանաւանդ թէ և հայրաբար գթութեամբ, ՚ի վերայ պայծառ վաս-տակոց Արարատեան Ընկերութեան, շուք տնէ ազգային յառաջադիմու-թեան՝ հետագայ համբաւելի և շատ քաջալերական գրով :

Ընծ. և. Ազգասէր Պարոն .

Զօգտակարական ձեր լրագիր աւրախութեամբ ըն-թերցեալ սովորելի լաւ խրատականերս շարժեալ եղ · և ամեայն հաճութեամբ ընթեռնումք ՚ի նմա զհա-մառոտ գրութեամբ և եռանդուն ազգասիրութեան ձերոյ · և մեծապէս եմ շնորհ յայտ առնեմք Ըն-կեր. Պարոնեաց · զի յայտնէ զհայրենասիրութեան փայ-լումն մեր և բարուք պահել նշանեք ՚ի մերազ-նեայն մեծ արդեայ զարգացման հետեւանաց ժողովրդոց· Եւ իբրև զայն նշանակ շնորհակալութեան մերոյ՝ ըն-ծայեմք ազգային ՚ի յիշեալ Բազմավիպին մերոյ ՚ի Պարոն Յովհաննէս Աւգուստեանց օրինակ մի ընծայա-ւորք մատենին աշխարհագրութեան Աշխարհին Ընծայաբ-

սէրս յայտնեալ , և մատուցանել զայն ՚ի զիմաց Ուխտին մերոյ ՚ի թանգարան Մասեանց Արարա-տեան Ընկերութեան :

Մինչ պատմեաց սորա յերեմեալ զՄխիթարեանց, զի հանճարեղ յայսմ հրաւէր յայս զնոյն զՄխիթարեան Ձեր առ Մեծապատիւ իշխանն Յ. Պետրոս Ալեքսա-նդրեան · և նա փութացոյց և պիտանին հասուցա-նէ զայն առ մեզ :

՚Ի փոխարէն մաղթելով Արարատեան Ընկերու-թեան Ձերում, որպէս և Ազգասէր լրագրիդ գոյա-կան յաջողութիւն յանկալի՝ որ լինել ընծայեմ

Ընկերութեանդ Ձերում

Ն. Ծ.

Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ

՚Ի ՎԵՆԵՏԻԿ ·
՚Ի Վանս Սրբոյն Ղազարու :
3 Յունվարի 1848

Ես սակայն ոչ եհաս մեզ պարգեւն , բայց յուշեալ ընկալցուք · շնորհա-կալու շնորհամբք համբուրելով նախա-շար կարգ եղցուք զայն ՚ի թիւս մատե-նից Գրադարանի Ա. Ը. ընկերութեան՝ արժանի թողլով մեծապանծ պայծառա-ծանութեան նորա :

Զգիտնական քաղցր պատկերեմք ըն-թերցողաց ՚ի մեր դպրանոց Օ...

կշռոց . բայց զՀոգին Սուրբ 'ի բար-
ձունս՝ աղաչեմք . յորդորանել յաղ-
գի միում զնոյն սէր ջեռուցիչ՝ չա-
փել զարժէս ազգաւոր վարձատրու-
թեան այսորիկ՝ զորմէ պատիւ անձանց
համարիմք մեզ լինել երախտաւոր .

---

'ԻՍԿ ՀՕԴ արձակեալ 'ի Պարս-
նոց Ազգակցեան Խշքարդ՝ նաւեաց
'ի Բոմբէյի յընդհանուրդ ամսոյս .
յորում եւ Պարոն Անդրէաս Գալս-
տանեան՝ գնալ 'ի Նոր Ջուղա՝ յիւր
սիրական Հայրենիս .

Ոչ տարադէպ համարիմք առաջի
առ ուղեւոր ծանուցանել . զի Յար-
գի Պարոն Աւետիկ Գալստեան եղ-
բայր նորա . եւ Հաշուեհալ Արարա-
տեան Ընկերութեանս . Ճշմարիտ
Հայրենասիրութեամբ նորատել համե-
րով Նոր Ջուղայ . որոյհետեւ հողմանցն
Պարսկաստանի առ հասարակ . յորէ
հաստատելոյ Արարատեան Ընկերու-
թեանս մինչ ցարդ՝ ամի ամի գնեաց
եւ երբեմն մեղք՝ զմեծ քանակութիւն
գրոց տարածելոյ 'ի մէնջ . զի հեռա-
ւոր գաւառն մի հաստատեսցի 'ի Նոր
Ջուղա . Իւ եթէ ազգային բաշխակ-
րութեան համբերեսցի՝ ընդարձակեսցի-
ցէ զայն մինչեւ 'ի Թաւրիզ եւ 'ի Գաւ-
րէժ՝ բառ մեծի մասին՝ յօգուտ ազ-
գային յառաջադիմութեան :

Եթէ աղքատոր . եւ ամենուրեք
կուսէ օգտակար օրինակի Պարոնս
Հեռաւէին եւ ազգասէր Հայրենակիցք
մեր առաս եւ անդ . ազատէր ոչ միայն
Արարատեան Ընկերութիւն մեր 'ի
զաւեն մուրացկանութենէ անաւ բա-
ժանորդութեանց . այլ եւ զարդ մեր
'ի տարածարար կարգեալանաց եւ ծախուց՝
որ 'ի մասին գրոց :—

Ջ խորդ եւ լիցէ . որոց միաբանեալ կամք
լիցին զձայնակ ուժեալ վաստակոց Ա-
րարատեան Ընկերութեանս՝ տպագրե-
լոյ յընթացս այս երից ամսոց՝ յորդոր
մատուցանեմք զ խնել ——

'Ի Բոմբէյի՝ Ար. Պարոն Գրիգոր Մ. Մանուկեանց .
'Ի Բերաւիա՝ Ար. Պարոն Աղուհաւր Գ. Աղանուրեանց .
'Ի Մադրաս՝ Ար. Պարոնայս Յակոբ Եղիազար .
'Ի Նոր Ջուղա՝ Ար. Պարոն Անդրէաս Գալստեան .
Չինսուրա՝ Ար. Ռէկիան Աշտ Իշխաղաւլեան .
'Ի Բաղդատ՝ Ար. Աղա Յակոբ Մուրադեան Հիւ-
պատոս Տէրութեան Պրուսիոյ .
'Ի Կոստանդնուպօլիս Ար. Պարոն Անտոն Քէտալի .
'Ի Զմիւռնիա՝ Ար. Պարոն Կ. Պալզադարեան Արծա-
նագործ. Տէր եւ Տպագիր Արշալոյս Արարատեան .

☞ Հայոց . թէ ընդէր Արարա-
տեան Ընկերութիւն զկարգ հաստա-
տութեան չերգիւ մինչ ցարդ՝ յօր-
խարհ Հայրենեաց .. եւ կայ մինչեւ պա-
տասխանես .

---

— Պարոն Մեսրովբ Թաղիադեան
Պրոֆ. Մեհրամարք նաւաւ եւ ի Գբ-
նանկ 'ի 12 ամսոյս . կալ ի Սինկա-
փուր՝ առեւտրական գործով . որում
մաղթեմք զկատարեալ յաջողութիւն
յԱստուծոյ .

— Պատուելի Պարոն եւ Տիկին
Յովհաննէս Բաղրամեան՝ որ գնա-
ցեալ էին 'ի Մաւրիտիա օդափոխու-
թեան աղագաւ՝ վերադարձան այսր ի
5 այսր ամսոյ . Այլ Պարոն Յովհան-
նէս երբեր ընդ իւր ոչ ինչ նոր՝ քան
զՍրճաղեկի Տիւնաեբրիմ գաւառաց .
բայց անմիաս է Աստուծով , եւ ակն-
ունիմք փութով առողջութեանն .

— Լսեմք թէ Պարոն Գաբրիէլ Յով-
հաննէսեան Կալկաթաեանց եհաս այսր
ի Մադրասայ —

— Պարոն Խաչիկ Յ. Տէր Պօ-
ղոսեան ի Շիրազանչայ .

# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Լսի թէ նախկին անտես Ճեմարանին 'ի բաց արձակեցաւ և առաջարկի զԱնգղիացի ոք 'ի տեղի նորա. սակայն ոչ կարեմք հաւատ ընծայել լրոյս: Զի կարգադրութիւնք Ճեմարանին խստիւ արգելուն զնեն մուծանելոյ օտարական յայդ պաշտօն. որպէս տես Գլ. Ժը. Յօդ 58. Որ երաշխէ պարտաւորութեանն կարգադրէ զի լիցի այդպէս Հայ և դաւանութեամբ հաւատոյն վարդապետութեանց Սրբոյ Եկեղեցւոյն Հայաստանեայց." Կանոն.

Եթէ պաշտօն անտեսին լինէր միայն հոգ կերակրոց և մաքրութեան զգեստուցն, թերևս արդարանայր ծառայն 'ի մերժել իւրում զազգ իւր, և փոխանակ մուծանել զօտարականն. բայց այնպէս պաշտօն նորա տարածի և յերս հոգևորական մանկանց. որպէս է ժամ սանել և բերել զնոսա, նախապատրաստել զնոսա 'ի հաղորդութիւնս խորհրդոց սրբոց, և բառ պաշտչամբ հոգալ զպատարագս պահոց, տօնակատաց և այլոց հանդիսից եկեղեցականաց և ազգայնոց, զոր ոչ գիտէ Անգղիացին և ոչ անօրինել կարէ, մեզ կարծի խորդ թուի գիտութեան:

— Լսի և՛ թէ բարեհաճեցաւ ծառայն՝ յաւելուլ 'ի չափ Անգղիացի պաշտօնէից Ճեմարանին զերրորդ վարձատրեալ ամի 50 ռուփի վարձովք: Որով թէև Անգղիարէն ուսուցչաց վերաակէն եղ յերիս՝ ընդհանրութեամբ սակայն՝ ամսական իբրև 900 ռուփիս վարձու. այն ինչ Հայկականն նոյն կայ, որ ինչ էր՝ միայն 350 ռուփովն:

Յորժամ Անգղիաերէն նախատես իւրոց այսոցիկ հրատարակեսցք զանփութութիւնս Հայրենի ուսման, երևելիք Անդամոց Ճեմարանին ըստ օրարքին միայն զբերան խնդրոց նորա. և զձայն հրատարակելոյ հեգն և հաստատութեան ասացեալ Ճեմարանին, որպէս և անել էր. Իսկ արդ՝ զի՞նչ ունիցին ասել՝ հայցելով 'ի համեմատութիւն ծախուց 900 այն ընդ 350. նոց: Այսօր անտես արձակեցաւ, վաղիւ դուցէ այլ ոք արձակեսցի. և Ճեմարանն մնասցէ 'ի մատանգութիւն օտարին: Բայց նախ՝ զի 'ի բերկանել այսպիսի տան ազգայնոյ՝ անձնարին է զայլ փոխանակ յարուցանել. և երկրորդ՝ զի ամէներան նախինիք մեր սմա կամ նմա ոչ կտակեցին զմեծագործութիւն և զհաստատած նորա՝ այլ Ազգին, և այն՝ վասն ուսման, վասնորոյ զարգեխս այսչափ մատաղութեան համբերէ լուութեամբ եկեղեցւոյ Հայաստանեայց՝ 'ի մասին այսորիկ՝ մինչ որ կայ:

ՏԷՐ ԿԻՐՈՍ ԲԵՐԹՈՂԻՈՒԹԵԱՆ. Մի յառաքելական վիճակաւորաց Անգղիներոյ 'ի Բթաւիա՝ յառաքեալն զնոմ՝ ժողովրդեան յաւուրս տօնից նոցա, չափէր զօրհնութիւնս ինչ կամ՛ներգբոցս 'ի թուղթ՝ և ասէր 'ի մանն, զի նոքին չափով՝ չափեսցի և ժամոց կիքեան. Մասըլուր՝ նորեկ ամի, թագեալ որում՝ ուխտեաց հետեւել, և հետեւեալ՝ որում ոչ կարէր, առեալ զհետադայ չառ հիմնայի ասացող՝ և առաքեաց առ Անուանն՝ յիշատակեալ յերրորդ՝ այսպէս.

"Կը ինէ է եւթիւն.
Որդին խաչելութիւն.
Հոգին սուրբ մխիթարութիւն.
Եկեղեցի անձն մի լինութիւն.
Եւ ընդ Աստուածածնութիւն.

Անցիցեն տարիք քոյ բարութեան
Փառք եւ Միածին ամենախնամութեան.
Նա քեզ մնան բարերարութեան
Եւ իմ՝ քոյդ * բարեգործութեան։"

Պարոնն բան չհասկանալով յայտ-
նիսի չհաշխարհին ազդատանաց. հար-
ցանէ ցանձնս յիմաստնոց. նոքա աս-
մեզ ասացին՝ և մեք աշխարհի մատա-
կարարեմք, վերծանել և հիման.
հաս մայն հիման, լեր. մեռ եր-
եանց՝ թէ այնքան չար դղեալ պայ-
քան դարպ հասինձն ճէր պարոնա-
կէր մինչ յարդ.

Ափսոս չէր արդեօք զայսպիսի հը-
րաշալիքս ող յայտեան խնարհ վի-
ճակ փառաւոր, այն ինչ Հօլլեօրական
Գիպրոց Նոր Զ ուղայ մեծարելս հա-
րստի Ընտրան գրչին.

Ողջ աւել հաժարժակի թէ վայ
քերթող ոչ ասէ պհամբակի.—Այսք
Աճեկավոր մեծել մեղ զայս հանելուկ.

---

## ԱՐՏԱՔԻՆՔ

— Բազում աղախութեամբ հրա-
տարակեմք, զի նորոգ փոխարքայ Ա-
րեւելեան Հնդկաստանի՝ ի մահ ե-
ղեալ է նոր լոյս ծագել յարարս հա-
ւասարութեան ուղղոյ, և զ'ի վա-
ղուց հետէ բարձի թողի արարեալ Կրի-
բիստոնէութիւնն և զՔրիստոնեայս
Հնդկաստանեաց՝ համարել արժանի
գթութեան և խնամոյն։ Ինչ հարկ
առէ Գոյլուց և Չինաստանի յունելով
զասն Մահմետականաց և Հնդկաց,
ու զկել զՔրիստոնեայս յունածից
և ի պաշտամանց անտի՝ որովք աղ-
բել կարացեն.

---

* Եւ էլ, ասէ ծոյն բարի շամփանէիան." Բայց ի
թարգմանութեան արկածէ շնորհն, թէ փոփոխեալ՞ն ար-
ժանն, թէ գիւտադիւն.—

—Լօն թէ Մու և յաղաղս բանին
Տրանի այնպիսի ինն խորհեալ իցէ.
որով ամենայն 'ի բարութիւն հասա-
րակաց եղիցի ունին.

— ԸՋԲՏ ԱՌ ՆԻ ՏՈՒՐ. Մոքս
բարձաւ 'ի վաճառաց և մաքսարան
դադարեցաւ 'ի գործոց՝ ընդ ամենայն
սահմանս Ընկերութեան Արեւելեան
Հնդկաստանի. 'Ի տեղիս յայլ ան-
ցեալ սահմանաց Ընկերութեան Ա-
րեւելեան Հնդկաստանի՝ մաքս չու-
նին ապրանք. բայց յայլ անէութիւ-
նըս բարձեալ կամ բերեալքն՝ ունին.

Հարուստք արանցն, որք և մաքս
առեալ 'ի վերայ շահել կարէին.

Աղքատք ուխտարանն, զի ինե-
րեալ՝ և ս կարին առ և այլ պարա-
պել, առանց յերկիւղանալ մաքսառելոյ
զինուորին մայր դ րամ իւրեանց.

—Տէրութեամբ գրեմք, զի յայս
ամի փոխադրական ախտն կարմրուկ
կոչեցեալ կորի զդղացու Հնդկաս-
տան. որով զրեթէ մանկունք առհա-
սարակ ախտացան. բայց ազորմութեամբ
Նախախնամին անկեան զերծան.

—Յանցեալ շաբաթ գիշերի սաս-
տիկ հրդեհ պատահեցաւ 'ի Պատերա-
զմութ. և ցհինդ համարել յաճխոն
զատեաց զմեծ կաւատութիւն վշա-
գործ թեաց՝ բաս արժէից 8,000
ռուփեաց. Հոս շղջահան դործին
և մեծ արխութիւն եղայց 'ի շէջուցա-
նել զհրոյն՝ յետ ամենայն ջանսոց.

---

## [illegible]

— Ի 11 Յունվարի 1848 ժամա-
նեցաւ Պարոն Բարսեղ Յովակիմեան
'ի Շխանեայ՝ հանդերձ դարձ յապա-
նոցին.

ԻՆՔՆԱԲԱՐՁՐՆՈՒԹԻՒՆ.—Յատաւօ-
տուն 21 Յունվարի քաղաք ջերմին

հրացանաւ Պարոն Գանդման երեւելի վաճառական ամն Հոլանդացի (յանցեալ ընկերաց Տուլոր և Գանդմանի․) թէպէտեւ 'ի վիճակի ոչ իւիք ունելով զաւելի ապաւինութեան․ Երեսպէս ձախ և յառաջադէմ յանուցս իւր․ սակայն յայնպիսեաց ամն թուեր լինել՝ որ առաջարկապէս օտարոտի բնութեամբ և չափազանց ունակութեամբ իւրեանց սանձանք իսկ են անձանց իւրեանց․

Նոյն թէ ասացուցք եւս յառաջ քան զգործուրելի գործ իւր․ ցուցեալ էր զնշանս զառանցութեան․ սակայն 'ի յօրինակյն պատշաճապէս գլխոյն մնալ առաւելք յառաջ․ և յետ երկէն պատուիրելոյն խստիւ ծառայից իւրոց չտանել զինքն մաղձայարոյց ընդ առաւօտն՝ հաւանական երեւի թէ զխորհանամն իւր յառաջադէտ խորհեալ էր․— Չէր ամուսնացեալ․—

ՇՈՒՆ՝ ՈՐ ԿԱՐԵԿՑԷ ԶՏԷՐ ԻՒՐ.—Պատուեցին Եւրոպացի գերդաստան մի առ ժամանակս բնակեալ զաւակօք՝ 'ի յեղին առոխձան չքաւորութեան հասեալ․ չքնաղամբ այն բազմոն՝ որոյ 'ի հարուստաց հազիւ ոք պատ գերեկ յաշխարհի․ և անձոր անգամ 'ի հայթել զառօրեայ հաց իւր․ կայր 'ի առաջնում չուարման և վհատութեան․ Տիկինն յանել զթիւ մանկանցն 'որոց ծնողաւամբ․ որով առաւելեան ևս քան զեւս տարակուսանք ապրուստի․ Իսկ փոքու յառաջ ժողովեալ էր լեալ և շուն իւրեանց․ որպէս թէ 'ի նպաստ նպաստաւորութեան անարգն․ Զի պատահեալ նոցա յայնմ աւուր՝ ուրեմն 'ի ծանօթից․ և լուեալ թէ հարուստ Պարոն ամն՝ որ կարի զանխատեալ է զինս ձիոյ և շան՝ շատ 'ի խնդիր էր առնելոյ շան 'ի վաճառել զնա 'ի Պրոյեանի կատակաց սիրոյն ղժամփոխան իւրոյ՝ առաջարկեաց նոցա փոխել առաքել Պարոնին զշուն իւրեանց․ Որոյ արարեալ՝ գտանեն այժմ 'ի Պարոնէն ամառական 25 ռուփիս յոհ 'ի վարձատրութիւն ձագամօրն՝ թողյ իւր շնորհածութեան․

---

## ԳԱՐՕԿԱՏԱՆ
## ԵՌՏԵՆԱՆՕՒԱՅԻՆ ՁԻՐ

“Օրինօք ամն թուէլթել անուամբ ամուսնացեալ ընդ Սեղգուրի Մանուկեան Գուղայեցւոյ․ և յանցեալ ամի սպանանեալ 'ի կենաց՝ եթող յաշխարհի որք՝ զՄիքայէլ որդի իւր․ հինգամենեայ տիօք․ Հայր մանկանն՝ ոչ հոգ տարեալ նմա՝ յանձն առնու զմանկութիւն գործոյս յղանք նորա՝ այն է Տիկին Մարիամ Խանում կին Ջարսոր Սեմայրի և Պապուչեան Խոջեի․ այլ աղքատին վիճակ նորա ոչ լեալ նմա ձեռնտու պահել փոխ նորա զանձնառուռք՝ գձաւորութեամբ մեծաւ առեալ զմանուկն աստանդական դեգերանօք և որբանօք դեգերեցուցանէր 'ի գաւառաց մերոց․ Այլ քաջայայտ է ամենայն ուղեւորաց՝ թէ չէր հնար ամէն եղանակաւ զարգանալ մանկանն՝ մանաւանդ 'ի գիւղի՝ յորում չէ հնար զարգացուցանել 'ամէն եղանակաւ․ Այդ 'ի գիւղի մտոյծ մինչ մանուկն շէջ բաձեալ լայր 'ի խնդիր մայրական գրկաց և կաթին՝ զայրացեալ ողբոց հանոյ նորա՝ և չկարեալ յուսահատէ ձար առ յաղնել մանկանն՝ խառնեաց զարտասուս իւր ընդ մանկանն արտասուաց․ Այլ ուստի հնար էր գտանել օգնական յայսպիսի աղէտալի տառապանաց․ վասնորոյ մայրական զթով մտմտեալ՝ զնէ զպահեստս առանձին իւրոց 'ի բերան մանկանն․ Թերեւս ամէն գործադրութեամբ առ վայր մի դադարեցուցա-

՚նել զնա յարատատութեան. այլ երանի ժամանն՝ զի թերոյ իւրոց անընկալութեանց դաշտարեալ մանկանն յարատատուաց՝ եմուտ ՚ի քուն անոյշ. «Ի խնդիր եղեալ պատճառաց անտեղեկալ պիտակածոյս՝ եղիս զատեան իւր լի կաթամբ. յորմէ ճաշակեալ մանկանն էառ և զքնոյն հանգիստ։ Այլ որ առաւելու զարմանս և յայտնաբարբառ քարոզէ «Աստուածային լինել ձիր» է՝ զի ՚ի հատակի յիսուն և երկու ամաց զոյով կնոջն՝ ընդդէմ է բնականին այսպիսի ծնն գիւղուած։ Որ ինչ արտաքոյ է բնականին՝ կոչի «հրաշք.» վասնորոյ և զսա ՚ի կարգս հրաշից դասել՝ չէ ինչ վարկպարար։ Որպէս ամենայն հրաշից պատճառ Աստուած է՝ այնպէս և սորին պատահմանց հաւատալ թէ եղէ նա։ Այդ ամեն հրաշից զարմացեալ մանկանն կայ ցայսօր կենդանի և դեռ նորին մանուկ։ ՚Ի ծննդեան եղե ստուգութեան իրիս՝ և ականատես եղէ՝ զի ստինք կնոջս ըստ բնականին թարշամեալ՝ այլ ՚ի ծծելն ցայտէր արտաքս զկաթն։

Յայսմիկ կնոջէ լուայ զայլ ևս հրաշից գիտուածս, յորս առաւելեալ քան զկուրն։ Պատմէր թէ քան ամաց յառաջ՝ դէպ եղև գալ ՚ի տուն մեր այր ոմն Պարսիկ՝ բարձեալ ՚ի գիրկս զմանուկ քառամսօրեայ խանձարրապատ. «Ո՛ ամեն աման ատէ, կարի ինձ ուռուցեալ տեսի. և հարցեալ զպատճառն՝ պատմեաց թէ կինն ծնեալ զմանուկս զայս ապականեցաւ ՚ի կենաց. և յըստեանց իւրոց արտադրեալ զկաթն դիեցուցանէր զմանուկըն։ Ստուգութիւն իրիս արգեամբ ցուցանել խնդրեցաք ՚ի նմանէ. ընդ որ ասէ սաւաքի մեր զկեցոյց զմանուկն. և ծծեալ զստինս իւր եղ կաթն յայնցանէ։» Ստուգութեան գիտուածոյս վկայեն և քանի մի ՚ի ծերոց անդուստ։

☞ ՚Ի մասին սահանց դասուրք ունեցեալ պատուոյ յորդորելոյ կաթամբ, ահա Առաջին Համա. Հանապարհորդութեան խնդ. Իսկ ՚ի մասին սահանց առն յորդորելոյ կաթամբք ծանէր զի նոր իմն գրեցով Յորդոյ Պարոն Հազանկարի մերում. պատմեաց զիրան յականջս Ընդգինոցի նաւապետաց ամանց. որք միահաղոյն հաստատեցին. թէ «Բազումք ՚ի բժշկաց Եւրոպայ վկայեն զայն. այլ խորհին յանհաւատութենէ և ՚ի ծաղուց աշխարհի՝ ՚ի հրատարակել յայդ. Թէ այս՝ և թէ այն. մեք բնաւ ոչ զարմանամք ընդ այս. զի և ՚ի Սուրբ Գրոցն՝ Աստուած՝ մարդասէր նախ ինքնաբուն՝ սաղմոսի կոչի. այս է ստինքաւոր կամ ուռնոց սահանց. Այսպիսի այլանդակ նմանութիւն ոչ ունէր զԱստուծոյ գրիչն ստանչելի՝ եթէ չէր ՏԵՍԵԱԼ կամ ԼՈՒԵԱԼ. թէ յաբարածս նորա հնարաւոր էր պատահել այնպիսեաց։ Այս դէպք մեծապէս օգնեն Մեկենչոցի և ԱԶԳԱՍԵՐ ոչ ամաչէր հրատարակել ՚ի յայս։

Մ. Գ. Թ.

— ՚Ի 25 Նոյեմբերի եղ յատուկ ՚ի Թեհրան Միրզա Գէորգին Խանն, առ հաստատելոյ անդամոր զիրաւունս քաղաքականութեան իւրոյ. յորմէ յանկեալ ոչ եղեալ ՚ի գլուխ՝ Միայ անգործ.

— ՚Ի 27 Նոյեմբերի ժամանեցին աստ Մամաղայլի Խանն և Միրզա Հօսէինն. յորոց արգելու վաճառուած գինւոյ. և հրամայեցաւ նկրել զամբարս ցորենոյ Պարոն Կարապետի. այլ մեծամեծաց կարողութիւն Սարթիփ Խանի արգել զնա ՚ի գործոյն. Պահանջեն ՚ի Ջուղայոյ զմի 100 թումանս՝ տալով անտեսելի իրաւունս. այլ

վասն ժողովելոյ մերձակէից որ ի քեր-րև 150ւ գլուխ ունելով զՄերգողեան Առաջնորդն , բողոքեցին գինեվաճառն անկելոյս . և ի Նեմանէ վճռեցաւ , եթէ և յայլոց առաջաւ՝ և ձեռն սպառ է վճարել ։ Թուի թէ չկային ունելի նորա ։

— Կնեալ Գուռին Մէլիքեան 'ի 9 Դեկտեմբեր ել յատոսի տա. Թեհե-րան՝ իւր արժանավայել համբաւու՝ պատուաւորակաւ և 60 ոտամբք հեծե-լովք ։ Ընկերեցաւ նմա Տէր Կարա-պետ Վարդանեան խնամք նորա ։ այլ ա. ի՞նչ վախճան՝ առաւելի չէ յայտ-նեկանք նորա քաղի Համապարծո-ղութիւն ։

—Պարոն Աստուածատուր 'ի 12 ամ-սոյս ժամանեաց աստ՝ ունելով զար-քունի հրովարտակ տիրելոյ գեղջն "Վեկաստանայ" զոր իբրև ժառան-գութիւն իւր հաստատեալ է 'ի գը-րանն արքունի . նաև վերակացութիւն բարւոք կառավարութեան Ջուղայոյ ։

—Այգ մեր ընտիրաւք առանձնոյ պայ-ծառանայր կարի յոյժ առաւելուլ . բայց որում շնորհ մեծ ունին 'ի վերայ մեր Թագաւոր առաջնոյս և նորին Ի-պարքաւն . եթէ ազատութիւն մեր և անհոգութիւն գլխաւորին մերոյ ոչ յետ ընկերէր ։

—Քաղաքապետութիւն ամիւլոյս հաս-տատեալ յանձն եղև Միրզայ Նէբի Խանին . և յանձն թէ ունի ժամանել աստ յետ 20 աւուրց ։

Զօրքս քաղաքս հայ յանդոր-րութեան . թէպէտև երբեմն 'ի խոռըզ և յանկիբենս տոքին ոչ պակասին մառ-նաւոր խռովութիւնք ։—Սեռակք ա-մենայն են աստ՝ և երժան զնով . այլ զինի դարատեան Մամեդալի Խա-նի զին մերոյ՝ յաւելաւ տա. լուրն զուտս հին ։—Բարեպաշտուհի Սու-Թիփ Խանի առաջնանեանց սորայ վճարեաց Ամենափրկչի 2500 լանբրս ցո-րենոյ ։ 'Ի Ջուղայ 'ի 17 Դեկ. 1847։

## ՀԱՇՈՒԵՏՈՒՆ

ԻՍԿԱՊԷՍ մեծասանց ընդ առաւե-լութիւն արժանաւորութեան սատո-րացն՝ քան թէ նախանձիմք ընդ ա-ռաւելութիւնս որոցն՝ որով ուսումնա-սէր Իշխանքն Հայքն Հայաստանեայց յաւելան յօգնութիւն Բարեկամա-սաց Ընկերի Աշխարհայն Աշակերտաց ։

"Հայաստանի մեր յորդոց աշակերտ-նեցը" ասէ ։ Աշխարհայ Աշակերտեանն "վասն ու-նեցած իրենց համակրական սիրոյն նոր սպասելոյ մը առաջին ձեռ օրինաւ՝ 12 ա-ձինք յօժարամտութեամբ ստորագր-ուելով մեկենաս լրագրին . որոնց ա-նուանքը նշանակելով աստանօր , կը-սրութեամբ միանգամայն մեր մեծ երախտ շնորհակալութեան հրապարակաւ յայտ-նել ։

| | |
|---|---|
| Բարձր արդարադատ Նիկողոսեան Մեծապատուական խորհրդականն մեծազօր նշանաւոր Իսլամ-ահնեն | 1 |
| Բարձր սրբազան Կարապետ Արքեպիսկոպոս՝ քարոզիչ առաջնորդ Տփխիսի և Վրաստանի | 1 |
| Բարձր արժան . Սարգիս Վ. Ջալալեանց և Շօշին | 1 |
| Բարձր արժան . Կարապետ Վ. ։ Շահնազարեանց ատենակալ հոգևոր խորհրդարանին Վրաստանի | 1 |
| Գեներալն Սմբատ Մուրաթեան Մասնիկով և Ասպետ | 1 |
| Ազնուամեծար Համբարձումեանց և Պօղոսեանց | 1 |
| " Բժիշկ Ծառայութեան Յովհաննէսեան | 1 |
| " Նշանազգեաց Տէր Համբարձումեան | 1 |
| " Մէլիքեան Մելքիսեդ | 1 |
| " Զաքարիա Շահազիզեանց և Ասպետ | 1 |
| " Գալուստ Շիրմազանեան Վարդանեանց | 1 |
| " Զմիւռնացի Սարգիս Մարկոսեանց | 1 |
| ընդամէնն | 12 |

"Աշխարհաւորիմք յաւուրս երախ-տագիտութեամբ մեր սրտին անկեղծ շնորհակալութեան հաւատարիմք մնամք-

* Թուի թէ Համեմատաբերութի ինքն ոչինչ , որ է նա որ 'ի Ձեռնադրութեանց ժողովն , մինչև իւր Հօրն . Գրիգոր . և այլն ։ Վ. Տ. Ա.

ցանել յիշեալ վերջի երեք ամսուա-
կան ունանց, որոնք ազգասիրական
այսով խնամք կառնին [illegible] Աշ-
տարակեան յառաջադէմ զարգացմանը. մա-
նաւանդ խնամ դիւրացած են Շիր-
մանեան Ս. արդեանեանց Պօղոս Պա-
շային հայրենասիրական ջերմեռանդու-
թեանը. յորմէ շարժեալ յօժարամիտ
սրտիւ յանձնառու եղած է դաստիարա-
կութեան լուսաւոր ի Տփխիս։"

☞ Շնորհաւորեմ և շնորհակա-
լեմ միանգամայն մատուցանեմք Պատ-
ուական Եղիազար Երիցու, որ ուսոյն
և ուսուցանէ ազգին այսօրինակ մատու-
ցանել. որում հարկ՝ զհարկն. որում
շնորհ՝ զշնորհ. և որում օգնութիւն՝
զօգնութիւն։ "Թող Տէր ասասցէ ՏՈՂ
մեր սիրելի Հայրենակիցք։" և մեք
փոխարինատուութեան ճանաչմամբ
միայն հերթն մեր լինի. —երկրպագու-
թիւն չեզ։—

---

## ՕՏԱՐԱԶԳԵԱՅՆ

— Ի թիւ 301. Մեղուայ Ա-
րարատեան ընթերցաք թէ՝ Արքա-
յան Տէր ՄԱՏԹԷՈՍ Պատրիարգ Հայ-
ոց համարձակ Օսմանեան ... Հեռաւ-
որ Արաբիական պատուիրանաց՝ տե-
րանց իրաւասութեամբ կոն-
դակս տուաւ ընդ ամենայն եկեղեցիս
եկեղեցւոյ ընդ իշխանութեամբ իւրով,
աղօթս և գոհութիւնս մատուցանել առ
Աստուած՝ վասն յաղթութեան ի վե-
րայ Եւրոպական Եկի 'ի Հայս, և
խաղաղարարն Արդեան. Իւ Կայսրն
Հայաստանեայ ի ձեռն հաւատարիմ
պաշտօնէի Գերանն՝ շնորհակալիս ա-
ռաքէ նմա՝ արժանի զոյս.

— "Ձեր աղօթքը և խնդրուածքը՝
որ ըրիք իմ առ բարեկամաց յաղթու-
թեանս վրայ՝ յանց Աստուած և ըն-
դունեցաւ և շնորհք ըրաւ իմ թագա-
ւորութեանս այս փառաւոր յաղթու-
թիւնը, որուն հրքոգձայն իմ Աստ-
ուածուանոյ՝ հպատակներուն կատա-
րեալ հանդստութեանը համար։ Արդ՝
զձեր Պատրիարք քու բոլոր Աղգին
խաղաղ սէր և խնդրելս, որ եա այ
ո բոլո իմ ձեռքն հեռ, և ընդունելի
եղաւ իմ թագաւորութեանս ձեր կա-
տարեալ հաւատարմութեան սէրը և
փափաքը. և իմ փառաւոր թագաւո-
րութեանս ալ ձեր ներկայացեալ ան-
ուանի պէս իմ ձեր բարեխաղձութեան
հանդէպ՝ որ ըրիք և կ'ընէք. Աստ-
ուած ամենակալին իւր շնորհօքը
պահպանէ զձեզ զամենեսին։"—

— Եւրէ մեծի շնորհաց, բարէ ընդ-
հանուր երանութեան Ազգիս Հայոց.
որոյ վասն Հզօրն 'ի կայսերաց մերի
աղօթեկաց, "ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԿԱ-
ԼՈՒՆ, ասէ, ԻՒՐ ՇՆՈՐՀՕՔՆ ՊԱՀՊԱՆԷ
ԶՁԵԶ ԶԱՄԵՆԵՍԵԱՆ։" Իբրե չունի-
ցիմք զի և իցէ ազնուութիւն յանձինս
մեր, այս ԲԱՆ Թագաւորի՝ երեւ
պատգամ Թագաւորին Թագաւորաց՝
և ի նմանէ իսկ շարժեալ՝ ամենայն ա-
ւեւոյն է սալ ընդհանուր Ազգի մե-
րում զաղնուութիւն վերադրէ, Ս ա-
ռնելով պարտ և պատշաճ համարիմք
և մեք հաղորդել 'ի հեռաւոր սառ
աղօթից լրութեան եկեղեցւոյ մերոյ
սրբոյ՝ վասն կենաց և երջանիկ տէ-
րութեան այր Հօր և Տեառն, Ար-
քայի և Պաշտօնայի միանգամայն։

---

## ՏԱՃԿԻՆ ԼՈՒՐՔ

### Ի ՊՈԼԻՍ.

### ՄԱՀ

Ի 29 Նոյեմբերի հանգեաւ ի Տէր նորածին որդի Պարոն Յովհան Յարութիւնի ի հասակի 1 ամաց և 27 աւուրց աւաղելով ի ծնողաց իւրոց։

ՏՊԱՐԱՆՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ
Մ. Գ. Թովմաճեանց Ս. Երուսաղէմ